

Ը. 3. ՊԱՐՈՆՅԱՆ

Քննելով լեզվական նշանների գործադրման առանձնահատկությունները կապակցված խոսքում՝ գործաբանական լեզվաբանությունն անխուսափելիորեն լեզվագիտակցությանն առնչվող որոշ խնդիրներ է շոշափում: Հենվելով ճանաչողական լեզվաբանության դրույթների վրա՝ դիսկուրսի տեսաբանները գտնում են, որ հաղորդակցությունը մտքերի փոխանակման միջոցով մարդկանց մտքերն իրար կապելու ձև է, իմաստի ստեղծում և փոխանակում: Սույն հոդվածի նպատակն է լուսաբանել դիսկուրսի ճանաչողական հենքը՝ խոսքը դիտելով որպես կառավարելի և գիտակցաբար պլանավորվող գործողություն:

Խոսքային գործունեությունը, որը, ինչպես գիտենք, նախ և առաջ տեղեկություն հաղորդելու գործառույթ է կատարում, սերտորեն կապված է գիտելիքի համակարգի հետ: Գիտելիքն արտացոլում է անհատի՝ տվյալ պահին իմացածը, սակայն այն հարաշարժ իմացական գործընթաց է, քանի որ փոփոխվում, հարստանում է յուրաքանչյուր հաղորդակցական քայլից հետո: Սրանից հետևում է, որ գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և մեկնաբանությունը կախված է անհատների հանրական և հաղորդակցական փոխներգործությունից, և, ըստ այդմ, դիսկուրսի վերլուծությունը հաճախ դիտվում է որպես գիտելիքի կողավորման, համակարգման մեթոդ:

Պետք է ասել, որ ճանաչողագիտական ուղղվածություն ունեցող հետազոտություններում միշտ չէ, որ խոսքի մեջ իմացության դերը կարևորվել է: Օրինակ, բիհևիորիստական տեսության համաձայն՝ լեզուն սերտորեն կապված է մարդու բնագոյային վարքի հետ: Այս տեսության ներկայացուցիչները (Մավկոլմ, Վիտգենշտեյն, Քուլթր) դեմ են մարդու լեզվական կարողությունների ինտելեկտուալիստական մեկնաբանությանը և պնդում են, որ դրանք մոտ են բնագոյական գործողություններին: Ըստ Ջ. Հանթրի, լեզվական արտահայտությունները հասկացվելու, հասկանալի միտք հաղորդելու համար ինքնաբավ են, իսկ դրանց երկիմաստությունը պարզելու, հասկանալու համար կարիք չկա մտավոր գործողությունների դիմելու կամ էլ դրանք լրացնելու մտածական, վերլուծական գործողություններով կամ համատեքստով¹: Քննելով լեզվի հասկացման մեխանիզմը՝ Ջ. Քուլթրը նշում է, որ հասկացումը չպետք է շփոթել մեկնաբանության հետ, քանի որ լսողը, որը վերլուծաբան չէ, ոչ թե մեկնաբանում է լսածը, այլ, պարզապես, հասկանում է դա: Նա մերժում է գործաբանական լեզվաբանության մեջ լայնորեն կիրառվող լեզվափիլիսոփայական այն դրույթը, ըստ որի՝ խոսողը

¹ Տե՛ս **J. F. M. Hunter**, «Forms of Life» in Wittgenstein's Philosophical Investigations // Essays on Wittgenstein. Ed. E.D.Klemke. Urbana, University of Illinois Press, 1971:

մտադրություն է արտահայտում, և գտնում է, որ խոսքի վերլուծության ժամանակ պետք է հիմնվել մարդու վարքի, այլ ոչ թե նրա ասածի վրա²:

Ճանաչողագիտության նկատմամբ մերժողական վերաբերմունք ենք տեսնում նաև դիսկուրսի տեսաբանների շրջանում: Խոսքի ճանաչողական կողմի կարևորության վերաբերյալ իրենց քննադատական վերաբերմունքը այս լեզվաբանները մեկնաբանում են այն հանգամանքով, որ իրենք անմիջական կապ չեն տեսնում անձի ներքին վիճակների (հատկապես համոզմունքների, վերաբերմունքի) և նրա կատարած հանրային գործողությունների միջև³: Նրանք նշում են նաև, որ ճանաչողաբանությունը կենտրոնանում է անձի անհատական գործունեության՝ մեկ անհատի խոսքի վրա, մինչդեռ դիսկուրսը ուսումնասիրելիս շեշտը դրվում է խմբային և համատեղ կառուցված խոսքի վրա: Ահա թե ինչու, նրանց համոզմամբ, խոսքի ճանաչողական հայեցակերպի ուսումնասիրությունը չի նպաստում դիսկուրսի օրինաչափությունների բացահայտմանը⁴:

Մրան հակառակ՝ լեզվաբանների մի խումբ էլ սկսեց զարգացնել հեռավորացման թեզը (telementationism), որը մեծապես նպաստեց ճանաչողական լեզվաբանության հետագա զարգացմանը: Օրինակ՝ Ռ. Հերիսը կարծում է, որ լեզուն մտքեր արտահայտելու համակարգ է, իսկ լեզվական համայնքը՝ մարդկանց խումբ, որն օգտագործում է նույն բառերը նույն միտքն արտահայտելու, այսինքն՝ նախադասություն կազմելու համար⁵: Հեռավորացման թեզին հետագայում ավելացան Ֆոդորի՝ նախադասության սերման և հասկացման գաղափարը, ինչպես նաև Սըրլի իմաստի և հասկացման միտումնավոր լինելու փաստը: Վերջինս նշում է, որ «այն, ինչ խոսողի մտքում կա նախադասությունն արտաբերելու ժամանակ, կախված է նրա մտադրությունից: Խոսողի մտքին ներհատուկ դիտավորությունը փոխանցվում է բառերի, նախադասությունների միջոցով, որոնք ունեն ոչ միայն պայմանադրական իմաստ, այլ նաև միտումնալի, դիտավորյալ, խոսողի իմաստ (speaker meaning)»⁶: Այսպիսով, ի հակադրություն Ջ. Քուլթրի՝ իմաստի հասկացման բիհևիորիստական տեսակետի, դիսկուրսի տեսության մեջ լայնորեն կիրառվում է հեռավորացման թեզը, ըստ որի՝ ասույթը լսողին հասկանալի է դառնում այն ժամանակ, երբ նախադասության պայմանադրական իմաստը (այսինքն՝ իմաստի այն մասը, որը հասկացվում է լեզվական կանոնների կիրառման համաձայն) կապվում է խոսողի մտադրային իմաստի հետ:

Ճանաչողական լեզվաբանության կարևորագույն խնդիրներից է լեզվի, լեզվական կառույցների գիտակցվածության հարցը: Որոշ դիտարկումների

² Տե՛ս **J. Coulter**, Language without Mind // Conversation and Cognition. Eds. H. te Moulder, J. Potter. Cambridge, Cambridge University Press, 2005, էջ 92:

³ Տե՛ս **I. Deutscher, F. P. Pestello, H. Frances, G. Pestello**, Sentiments and Acts. New York, A. de Gruyter, 1993:

⁴ Տե՛ս **R. E. Sanders**, Validating ‘Observations’ in Discourse Studies: a Methodological Reason for Attention to Cognition // Conversation and Cognition. Eds. H. te Moulder, J. Potter. Cambridge, Cambridge University Press, 2005, էջ 59:

⁵ Տե՛ս **R. Harris**, The Language Myth. London, Duckworth, 1981:

⁶ **J. R. Searle**, Mind, Language and Society: Philosophy in the Real World. New York, Basic Books, 1998, էջ 140.

համաձայն՝ լեզվական կառույցների համակարգը լեզվակիրների կողմից գիտակցված չէ, իսկ տեքստի կառույցները գիտակցվում են այնքանով, որքանով անհրաժեշտություն է առաջանում կարգավորելու բառացի շարադրվող միտքը⁷: Հոգելեզվաբանության մեջ նույնպես ընդունվում է այն դրույթը, ըստ որի՝ լեզվի մասին եղած տեղեկությունը «ներկայացված» չէ լեզվակրի գիտակցության մեջ. դա գիտակցական խոհածության առարկա է դառնում միայն լեզվաբան-հետազոտողի տեսական հետազոտություններում⁸:

Լեզվագործաբանները ճանաչողական համակարգի խնդիրներով սկսեցին զբաղվել այն պատճառով, որ նրանց ուսումնասիրության նյութը ոչ թե օբյեկտիվ ֆիզիկական գործողություններն են, այլ բառերով և այլ արտահայտչամիջոցներով իրագործվող իմաստալից գործողությունները: Եվ քանի որ լեզվաբաններն իրենց աշխատանքներում մեկնաբանում են խոսքի տարրերը, դրա կառուցվածքը, խոսքային գործողությունների և խոսքային իրադրության առանձնահատկությունները, ուստի նրանց կատարած տեսական դիտարկումների հավաստիությունը ճշտման, հաստատման կարիք ունի. արդյոք դրանք համապատասխանում են իրականությանը, փաստարկված և հիմնավոր են, թե՞ սուկ հետազոտողի մտքի՝ սուբյեկտիվ ընկալման արդյունք: Սակայն, ինչպես նշում է Սըրլը⁹, եթե լեզվաբանի՝ սեփական դատողությունների ճշմարտացիության միակ երաշխիքը իր՝ որպես լեզվակրի, վստահությունն է սեփական կռահողականության, կանխագագողության հանդեպ, ապա միշտ չէ, որ նման երաշխիքը բավարար է: Բանն այն է, որ լեզվավերլուծաբանները իրենց տեսակետի հիմնավորվածությունը ստուգելու համար որպես հիմք են ընդունում լեզվի կառուցվածքային ձևերը՝ լեզվական համակարգի ներքին կայուն տարրերը: Դրան հակառակ՝ խոսքի լեզվաբանության տեսաբանները ձեռքի տակ չունեն իրենց տեսական դրույթի (ենթադրության) ճշմարտացիությունը երաշխավորող կայուն, անփոփոխ կառուցվածքային համակարգ, քանի որ խոսքը հարահոս երևույթ է և միայն կիրառման մեջ է ի հայտ գալիս: Ահա թե ինչու որոշ դեպքերում խոսքի վերլուծաբանների համար խոսքը ճիշտ մեկնաբանելու, և իրենց մեկնաբանությունը հիմնավորելու խնդիր է առաջանում: Դա հատկապես կարևոր է երկիմաստ կամ շփոթություն առաջացնող խոսքային իրադրություններում, երբ լսածի կամ կարդացածի երկակի մեկնաբանության հավանականություն կա: Ահա այստեղ է, որ դիմելով իմացությանը՝ խոսողի ներքին վիճակների կամ խոսքի մեկնաբանման ունակությունների լուսաբանմանը, խոսքի վերլուծաբանների նկարագրությունները և տեսական մեկնաբանությունները հիմնավորվում, փաստարկվում են: Քանի որ խոսքը մտադրային գործողություն է, ուստի անհնար է նկարագրել այն առանց անդրադառնալու տվյալ խոսքային միավորն արտաբերելու դրդապատճառին, շարժառիթին: Իսկ քանի որ խոսքային գործողություն կատարելու դրդապատճառն արտահայտում է խոսողի ներքին վիճակը

⁷ Տե՛ս **Б. В. Касевич**, Языковые структуры и когнитивная деятельность // Язык и когнитивная деятельность. М., 1989, էջ 8-19:

⁸ Տե՛ս **А. А. Леонтьев**, Язык, речь, речевая деятельность. М., 1969:

⁹ Տե՛ս **J. R. Searle**, Speech Acts: An Essay in the Philosophy of Language. London, Cambridge University Press, 1969:

(համոզմունքներ, հույզեր, կարիքներ և այլն), ապա խոսքի, դիսկուրսի միջոցով մենք հնարավորություն ենք ստանում թափանցելու խոսող անհատի ոչ լեզվական ներաշխարհը, ծանոթանալու նրա հոգեմիճակին, մտածումներին: Այսպիսով, խոսքի կառուցվածքից, խոսքային տարրերի արտաբերումից կարելի է եզրակացնել տվյալ խոսքային գործողության կատարման դրոպապատճառը՝ դրանով հավաստելով վերջինիս իսկությունը: Ահա այս մտածական ներքին հոգեմիճակի և խոսքաստեղծման կապի գոյության շնորհիվ ճանաչողագիտությունը հաճախ դառնում է լեզվաբանական հետազոտությունների ստուգության, վավերականության երաշխիք և օգնում է լեզվավերլուծաբանին համոզվելու, որ խոսողն իրոք արել է այն, ինչ հետազոտողը տեսականորեն շարադրում է¹⁰: Այս կապակցությամբ Բ. Կասևիչը նշում է, որ թեև լեզուն, խոսքը, խոսքային գործունեությունը գիտակցվածության տարրեր աստիճաններ ունեն, այնուամենայնիվ դրանք անհրաժեշտ գործիք են գիտակցական արտացոլման, ինչպես նաև գիտակցական կառավարման համար¹¹:

Իսկ ըստ Բերնշտեյնի՝ մարդու գործունեության բարձրագույն ձևերը կապված են ինչպես գիտակցության, այնպես էլ լեզվի հետ¹²: Ահա թե ինչու այն, ինչ գիտակցված է, կամ բառացի է, կամ էլ բառերով արտահայտելի: Կասևիչի կարծիքով գիտակցությունը առարկայանում է խոսքի միջոցով, և, հետևաբար, որքան միտքը «մոտենում է» լեզվական (խոսքային) արտածման սահմանին, այնքան ավելի գիտակցված է դառնում:

Ընդունելով Խոմսկու այն դրույթը, որ լեզուն ճանաչողական համակարգի մի մասն է, ճանաչողական գործունեության ձևերից մեկը, Բ. Կասևիչը եզրակացնում է, որ լեզուն պատմամշակութաբանական հենք ունի: Հետևաբար, լեզուն հնարավորություն է ընձեռում ստեղծելու տվյալ մշակութային հանրության կողմից ընդունված մտային կադապարներ, հաղորդելու և դրանց միջոցով ղեկավարելու ինչպես խոսողի, այնպես էլ մյուս լեզվակիրների գործունեությունը:

Երբ քննում ենք լեզվաճանաչողությանն առնչվող խնդիրներ՝ լեզվի և մտածողության, լեզվական և գիտակցական կառուցվածքների փոխհարաբերության հարցը, մենք նախ և առաջ նկատի ենք ունենում գիտելիքը, այն ստանալու, մշակելու, պահպանելու և կիրառելու խնդիրը: Լեզուն այն գիտելիքների արտահայտչամիջոցն է, որոնք գոյություն ունեն մարդու ուղեղում որոշակի կառույցների ձևով, որը մուտքի ամենամատչելի հնարավորությունն ունի դեպի գիտելիքի կառույցները: Ֆ. Բերեզինի համոզմամբ, լեզուն ունի մետալեզվական գործառույթ, որի համաձայն՝ այն «կարևոր դեր է կատարում մարդու գիտակցության և իմացության գաղտնիքները բացահայտելու գործում»¹³:

¹⁰ Տե՛ս **R. E. Sanders**, նշվ. աշխ., էջ 60:

¹¹ Տե՛ս **Б. В. Касевич**, նշվ. աշխ.:

¹² Տե՛ս նույն տեղը:

¹³ «Когнитивизм, когниция, язык и лингвистическая теория» // Язык и структуры представления знаний (отв. ред. Ф. М. Березин). М., 1992, с. 10.

Ճանաչողական լեզվաբանության մեջ ընդունված է խոսել նաև գիտելիքի պահեստարանի մասին: Սա մի շտեմարան է, որտեղ «տեղակայված» են լեզվական գիտակցության կառույցները՝ տվյալ լեզվի համար այն հաստատուն կատեգորիաները, որոնք զուգակցվում են ինվարիանտային գծապատկերներով: Ըստ որում, պահեստարանը փոփոխության է ենթարկվում որոշակի ազդանշանների միջոցով (անհասկանալի բառ, բառակապակցություն, արտառոց կառուցվածք ունեցող նախադասություն, դժվարընկալելի իմաստ, միտք արտահայտելու համար անհրաժեշտ բառերի պակաս): Այստեղ անչափ կարևորվում է մտադրության գործոնը՝ ինքնակատարելագործվելու ճանապարհով խոսքը հասկանալու պատրաստակամությունը¹⁴:

Կարևորելով լեզվի դերը գիտելիքի կառույցների ձևավորման, պահպանման և կիրառության գործում՝ Օ. Կուկուշկինան նշում է, որ ներկայումս գիտելիք հասկացության նկատմամբ երկու հիմնական մոտեցում կա: Ըստ ավանդական տեսակետի, գիտելիքը դիտվում է որպես օբյեկտ, որը գոյություն ունի օբյեկտիվ իրականության մեջ անհատից անկախ: Սա այն կողավորված գիտելիքն է, որը հնարավոր է իրար փոխանցել, կուտակել մի ինչ-որ տեղ, գիտելիք, որի հետ կարելի է գործողություններ կատարել: Այլ կերպ ասած՝ սա գիտելիքի այն տեսակն է, որը գետեղված է գրավոր աղբյուրներում կամ հենքային գիտելիքի ձևով գոյություն ունի մարդու ուղեղում, գիտելիք, որը փոխանցվում է գրավոր կամ բանավոր խոսքի, ընթերցանության կամ մեկը մյուսին հաղորդելու միջոցով:

Դրան հակառակ, ըստ ժամանակակից ըմբռնման, գիտելիքը դիտվում է որպես շարունակական գործընթաց, հանրային կառույցի արտահայտություն, որը չի կարելի օբյեկտիվ մեծություն համարել¹⁵:

Գիտելիքի ժամանակակից ըմբռնումից հետևում է, որ հաղորդակցությունը մարդկանց գիտակցությունները իրար կապելու միջոց է և ազդում է տվյալ պահին եղած գիտելիքի մակարդակի վրա՝ իմացողությունը դարձնելով շարունակական գործընթաց: Գիտելիքը դիտվում է որպես իմացողականության, իմանալիության գործընթաց (process of knowing), որը չի տարանջատվում, առանձնանում խոսող անհատից¹⁶: Խոսքը, որի միջոցով կատարվում է գիտելիքի կողավորումը, տեքստի (դիսկուրսի), այսինքն՝ կապակցված խոսքաշարի արարում է, որի ընթացքում անհատը գրավոր կամ բանավոր ձևով կատարում է իր իմացության, ճանաչողության յուրահատուկ մեկնաբանությունը:

Թերևս այս նկատառումով է, որ Թ. Շրայբերը և Բ. Մորինգն առաջարկում են «գիտելիք» բառի փոխարեն գործածել «իմացողություն» (knowing) բառը: Նրանք գտնում են, որ գիտելիքը անհնար է նկարագրել անհատից կամ համատեքստից անկախ, և, հետևաբար, տեքստի ստեղծումը դիտում

¹⁴ Տե՛ս նույն տեղը:

¹⁵ Տե՛ս **Օ. В. Кукушкина**, Речевые неудачи как продукт речемыслительной деятельности: Автореф. дис. докт. филол. наук. М., 1998. <http://www.philol.msu.ru/~humlang/articles/ref-oka1.htm>:

¹⁶ Տե՛ս **T. Schreiber, C. Moring**, Codification of Knowledge Using Discourse Analysis // 11th Nordic Conference on Information and Documentation. Reykjavik, Iceland, May 30 – June 1, 2001:

են կողավորման գործողություն, իմացողության յուրահատուկ մեկնաբանության գրավոր տարբերակի արարում: Ահա այս ամենից էլ հետևում է, որ դիսկուրսը կարելի է դիտել գիտելիքը համակարգելու և մարդկանց գործունեությունը գիտակցորեն, բանականորեն կարգավորելու համակարգ:

Այսպիսով, դիսկուրսիվ գիտելիքին վերաբերող մեր տեսական հետազոտությունից կարող ենք եզրակացնել, որ դիսկուրսը գիտելիքի ամբողջություն է: Դրա ստեղծումը և փոխանցումը ճանաչողական գործընթաց է և կախված է անհատների միջև եղած սոցիալ-հոգեբանական և խոսքային փոխներգործությունից:

Ճանաչողական լեզվաբանության դրույթներից մեկն էլ այն է, որ գիտելիքի կողավորման, այսինքն՝ խոսքի ընթացքում խոսքը կերպերը որոշակի միտումով են ներկայացնում իմացողության գործընթացը: Ըստ այդմ, դիսկուրսի վերլուծությունը միջոց է՝ վերլուծելու, թե մարդիկ ինչպես են կառուցում իրենց գիտելիքը, իմացողություն ստեղծում: Ահա թե ինչու դիսկուրսն անվանում են նաև դիսկուրսիվ գոյացություն, որն ունի իրեն հատուկ կանոնները: Դիսկուրսը ուժ է, որով կարելի է կառավարել մարդկանց գիտելիքը՝ նրանց իրազեկ դարձնելով այս կամ այն խնդրին:

Դիսկուրսի վերլուծությունն այսօր համարվում է նաև գիտելիքի կողավորման ինքնատիպ մեթոդ, որը հատուկ ուշադրություն է դարձնում գիտելիքի մեկնաբանությանը: Դիսկուրսի վերլուծության մեթոդի կիրառումով հնարավոր է պարզել, թե մարդիկ ինչպես են հասարակության մեջ կողավորում գիտելիքը, ինչի շնորհիվ էլ վերջինս դառնում է կառավարելի՝ նպաստելով հասարակության որևէ խմբում գիտելիքի ստեղծմանը, փոխանցմանը և կիրառմանը:

Դիսկուրսը քննելով ճանաչողական լեզվաբանության դիրքերից՝ Ջ. Հերիթիջը ցույց է տալիս, թե ինչպես է ճանաչողության գործընթացը խոսողի առօրյա ապրումների նկարագրության ժամանակ արտացոլվում խոսքում¹⁷: Նա նշում է, որ ճանաչողության գործընթացը չի սահմանափակվում նրանով, թե ինչ է խոսողը խոսում (speak). դա ընդգրկում է նաև այն, թե ինչ է վերջինս հաղորդում (communicate): Այսպես, խոսքի մեջ կան ուշադրությանը, ճանաչողությանը, հիշողությանը անդրադարձող բառեր, որոնց նպատակն է արտահայտել նկարագրության օբյեկտիվությունը, անկողմնակալությունը: Օրինակ՝ Ջ. Հերիթիջն ուսումնասիրում է **oh** բացականչական մասնիկի կիրառությունը խոսքում, դիտելով այն որպես մտավոր գործընթացի արտահայտչամիջոց, որն արտահայտում է վիճակի փոփոխություն գիտելիքի փոփոխություն, կողմնորոշման փոփոխություն: Այս մասնիկն օգտագործվում է նաև որպես խոսքի մեջ ինչ-որ բան շեշտելու, վերհիշելու գործընթացը արտածող լեզվական նշան, լուսաբանում է այն փաստը, որ խոսքը կերպով համար իր լսածը նորություն է: **Oh** մասնիկի միջոցով նաև որոշարկվում է խոսողի ասածի տեղիությունը խոսքի տվյալ փուլում, ինչպես նաև ընդգծվում է պատասխանողի գիտելիքի գերադասությունը հարց տվողի նկատմամբ: Հեղինակը եզրակացնում է, որ հաղորդակցման ընթացքում

¹⁷ St'au J. **Heritage**, Cognition in Discourse // Conversation and Cognition. Eds. Hte Moulder, J. Potter. Cambridge, Cambridge University Press, 2005, էջ 188:

ուշադրությունը, ճանաչողությունը, հիշողությունը վերացական, սուկ գիտական հետաքրքրություն չեն ներկայացնում: Դրանք հասարակական մտահոգության խնդիրներ են, որոնք արտացոլվում են խոսքում, իսկ դրանից հետևում է, որ մարդը՝ խոսող անհատը, ունակ է գիտակցաբար կառավարելու իր կենսափորձային և տեղեկատվական դաշտերը:

Պետք է ասել, որ դիսկուրսը որպես գիտելիքի կողավորման կառավարելի համակարգ է դիտվում ոչ միայն ճանաչողական լեզվաբանության մեջ, այլ նաև դիսկուրսի գործադրման ոլորտին վերաբերող լեզվագործաբանական հետազոտություններում: Զննելով դիսկուրսի ճանաչողական բնութագրիչները՝ Ֆերսխուերենը մերժում է ճանաչողության և հանրության խիստ հակադրումը: Այս տեսակետի ճշմարտացիությունն ապացուցվում է նախ և առաջ այն բանով, որ հաղորդակցման ընթացքում լեզվական նշանների ընտրությունը կատարվում է ըստ հանրության մեջ ընդունված սկզբունքների և ռազմավարությունների: Միևնույն ժամանակ, ճանաչողության տարրերը՝ մտավոր, հանրային, ֆիզիկական աշխարհը, համատեքստի հարմարակալին համահարաբերակցական ձևերն են: Խոսողի և մեկնաբանողի դերերը, որոնք մտովի են կառուցվում, բաշխում է հասարակությունը, լեզուների, կողերի, ոճերի կիրառությունը նույնպես կարգավորվում է հանրային հաստատված նորմերով:

Խոսողի ճանաչողական ապարատն առնչվում է նաև այնպիսի լեզվագործաբանական երևույթների, ինչպիսիք են ցուցայնությունը, իլլուկուտիվ իմաստի անուղղակիությունը, ներակա իմաստը, նախընտրելի խոսողական ակտերի իրագործումը, մտադրայնությունը: Այս հանգամանքը, ըստ մեզ, մեկ անգամ ևս ապացուցում է, որ ճանաչողությունը չպետք է հակադրել ոչ միայն հանրությանը, այլ նաև լեզվական համակարգին:

Ըստ Ջ. Ֆերսխուերենի՝ պլանավորման ենթակա է ոչ միայն խոսողի մտադրության արտահայտումը, այլ նաև լսողի՝ լսածի մեկնաբանությունը, որը հիմնվում է սցենարների վրա և առաջնորդվում է սպասումներով, խոսքային պլանների կանխատեսումներով: Իմաստ արտահայտելիս՝ լեզվական նշանների ընտրություն կատարելու ժամանակ, գիտակցությունը նույն ձևով չի աշխատում. կան լեզվական նշաններ, որոնց ընտրության, կիրառման ժամանակ պահանջվում է գիտակցվածության բարձր աստիճան, բայց կան նաև լեզվական նշաններ, որոնց կիրառումը ենթագիտակցորեն է կատարվում: Խոսքի ընթացքում լեզվական նշանների կիրառությունն ունի նաև ռեֆլեքսիվ, այսինքն՝ փոխազդական բնույթ, երբ պատասխան խոսքը արձագանքում է ազդակին: Սա կոչվում է ներգործող, ներազդող իրազեկություն, գիտակցություն¹⁸:

Լեզվաճանաչողաբանների նման Ջ. Ֆերսխուերենը խոսում է նաև մետագործաբանական իրազեկության մասին, երբ խոսքում գիտակցվածության աստիճանն արտահայտվում է որոշակի խոսքային միավորների օգնությամբ: Որպես այդպիսին լեզվաբանը քննում է դիսկուրսիվ ցուցիչները՝ խոսքի մետամեկնաբանություններ, որոնք արտահայտում են խոսողի գիտակցական գործողությունները:

¹⁸ St' u J. Verschueren, Understanding Pragmatics. London, New York et al., Arnold, 1999:

Դիսկուրսի մի շարք տեսաբաններ էլ, ինչպես, օրինակ վան Դեյկը և Վ. Քինչը, միջոցներ են մշակում դիսկուրսի հասկացման ճանաչողական մեխանիզմները բացահայտելու համար՝ փորձելով ստեղծել դիսկուրսի մշակման իմաստային և մարտավարական կադապարներ ինչպես նախադասության, այնպես էլ տեքստի մակարդակում: Նրանք առանձնացնում են գործաբանական հասկացումը և քննարկում այն հարցը, թե ինչ տեղեկություն է պետք լսողին խոսքային իրողության իլլյուտիվ իմաստը հասկանալու համար¹⁹:

Ճանաչողական լեզվաբանության մեջ քննարկվել է նաև դիսկուրսի հասկացման միջգիտակարգային կադապարի խնդիրը: Այսպես, վան Դեյկը և Վ. Քինչը մշակել են դիսկուրսի հասկացման ռազմավարական կադապարը, քանի որ, ըստ նրանց, դիսկուրսի ճանաչողական զննումը ռազմավարական գործընթաց է, որի շնորհիվ տեքստի մեկնաբանման և հասկացման համար մարդու հիշողության մեջ դրա մտային պատկերացումն է ստեղծվում: Համապատասխան ճանաչողական գործընթացներում կիրառվում է ինչպես ընկալվող տեղեկությունը, այնպես էլ այն տեղեկությունը, որը գտնվում է հիշողության մեջ: Այսպիսով, քանի որ դիսկուրսին բնորոշ հանրությանին գծերը փոխհարաբերակցվում են ճանաչողականի հետ, նրանք եզրակացնում են, որ դիսկուրսի մշակումը ոչ միայն ճանաչողական, այլ նաև հասարակական իրողություն է²⁰:

Դիսկուրսի մեկնաբանությունը որոշակի խոսքային ակտ է, որը կազմում է խոսքային փոխներգործության մեկնաբանության մի մասը՝ դիսկուրսի գործաբանական կամ ինտերակտիվ հիմքը: Քանի որ այս հեղինակները քննարկում են գրավոր տեքստի՝ դիսկուրսի հասկացման, այսինքն՝ մտավոր մեկնաբանության կամ, ինչպես իրենք են նշում, մշակման խնդիրները, ուստի նրանք կարծում են, որ դա պայմանավորված է նաև խոսողական ակտի իմաստը հասկանալով: Սա այսպես կոչված «գործաբանական հասկացումն» է, որը դիսկուրսի իրադրային կադապարի գործաբանական հիմքն է կազմում:

Տվյալ դեպքում դիսկուրսի ներկայացումը հիշողության մեջ, ըստ վան Դեյկի և Վ. Քինչի, կախված է այն բանից, թե լսողն ինքը ինչ նպատակ ու դրդապատճառ ունի և ինչ ենթադրություններ է անում խոսողի նպատակի և այլ դրդապատճառների մասին: Դիսկուրսի մշակումը իրադրային է, և որպես կանխադրույթ կարող են կիրառվել ինչպես ընդհանուր նորմեր ու արժեքներ, այնպես էլ հաղորդակցման մասնակիցներին և առկա փոխներգործության հնարավորություններին վերաբերող դիրքորոշումներ:

Ինչպես տեսնում ենք, հասկացումը ոչ թե լեզվական օբյեկտը պատկերող պասիվ «կառույց» է, այլ ինտերակտիվ գործընթացի մաս, ռազմավարական գործընթաց, որտեղ կայանում է կարդացածի ակտիվ մեկնաբանում

¹⁹ St' u T. A. van Dijk, Opinions and Attitudes in Discourse Comprehension // Language and Comprehension.- Eds. Le Ny, J.F., Kintch W. - Amsterdam, North-Holland, 1982; W. Kintsch, T. A. van Dijk, Toward a Model of Text Comprehension and Production. Psychological Review, Vol. 85, 1978. P. 363-394:

²⁰ St' u T. A. ван Дейк, В. Кинч, Стратегии понимания связного текста // Новое в зарубежной лингвистике. Вып. XXIII. М., 1988, էջ 159:

համատեքստային տեղեկատվության տարբեր տեսակների կիրառությամբ՝ հաշվի առնելով խոսքային ակտերը, հաղորդակցական գործունեությունը և ամբողջ իրադրությունը: Ընթերցողը փորձում է վերականգնել ոչ միայն գրողի ենթադրյալ մտադրության իմաստը, այլ նաև գրողի հետաքրքրությունների ու նպատակների հետ առնչվող իմաստը: Այդ պահին ակտիվանում է նրա իրավիճակային հիշողությունը, ինչի շնորհիվ նա, օգտագործելով իրադրային կադապարը և տեքստից ստացված լեզվական տեղեկությունը, ինչպես նաև տվյալ տեքստում հիշատակված գործողությունների, իրադարձությունների, անձանց մասին տեղեկությունը, մշակում է կարդացած տեղեկությունը:

Այսպիսով, միանգամայն ընդունելի է հեղինակների եզրակացությունը, ըստ որի հասկացումը չի սահմանափակվում տեղային և համընդհանուր համապատասխանությամբ, այլ պայմանավորված է նաև համապատասխան իրադրային կադապարով: Մա էլ, իր հերթին, հանգեցնում է այն համոզման, որ տեքստն ունի ոչ միայն կոնցեպտուալ, այլ նաև վերաբերական իմաստ, այն, ինչը ճանաչողական հոգեբանության և փիլիսոփայության մեջ կոչվում է ինտենսիոնալ (նշանակության հետ կապված) և էքստենսիոնալ (վերաբերական) իմաստ:

Կարող ենք եզրակացնել, որ հասկացման գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է ակտիվացնել ոչ միայն գիտելիքի դաշտը, այլ նաև կարծիքները, դիրքորոշումները, հույզերը, որոնք անհրաժեշտ են կապակցված տեքստի բովանդակությունն ու հաղորդակցական մտադրությունը գնահատելու համար:

Որքան էլ ընդունելի լինի վան Դեյկի և Վ. Քինչի առաջարկած մարտավարական կադապարը, մենք չենք կարող օգտվել դրանից, քանի որ այն նախ և առաջ ընդգրկում է խոսքային գործունեության մեկ կողմը՝ ընկալումը, հասկացումը, և չի ներառում խոսքարտադրության կողմը, իսկ դրանով խոսքային գործունեության մեկնաբանությունը՝ որպես փոխներգործության գործընթացի, խաթարվում է:

Վերոնշյալ կադապարը մեզ համար կիրառելի չէ մեկ նկատառումով ևս. ինչպես իրենք՝ հեղինակներն են ասում, լսածի իմաստի և գործառույթի մեկնաբանությունը կախված է խոսքային իրադրության տեսակից՝ ժանրից, և ռեգիստրից: Առօրյա դիսկուրսը, որն ընթանում է առանց հանրության սահմանափակումների, բնականաբար, կունենա իր յուրահատուկ կադապարը: Երբ խոսում ենք երկխոսության մասին, ապա պետք է գիտակցենք, որ այն ունի հասկացման յուրահատուկ կադապար: Բանն այն է, որ խոսընկերներն ունեն իրենց դրոպապատճառները, նպատակները, մտադրությունները, և խոսելիս նրանք ոչ միայն բառացի, այլ նաև ոչ բառացի տեղեկության հիման վրա են ճանաչողական պատկերացում կազմում: Դեռ ավելին, հիշողության գործոնի շնորհիվ դիսկուրսի մեկնաբանությունը կախված է ոչ միայն առկա, ընկալվող խոսքից (լինի դա գրավոր, թե բանավոր), այլ նաև հիշողության մեջ պահվող և անհրաժեշտության դեպքում հիշողության «պահեստից» գիտակցական ոլորտ արտամղվող, այսինքն՝ վերհիշվող, գիտելիքից:

Հաղորդակցական իրադրություններից յուրաքանչյուրի համար լեզվական միջոցների ընտրության և ասույթների կառուցման կանոններ են

ստեղծվում, որոնք հիմնվում են հաղորդակցման գործաբանական նորմերի վրա: Վերջիններս պայմանադրական նորմեր՝ վերացական կանոններ են, որոնք դրսևորվում են հաղորդակցման գործընթացում և արտացոլում են լեզվին առավելապես բնորոշ հատկանիշները: Խոսողների մտքում այս նորմերը առկա են ներակա ձևով և, որպես կանոն, գիտակցվում են միայն դրանց խախտման դեպքում:

Այսպիսով, գործաբանական լեզվաբանության մեջ ճանաչողագիտության մի շարք հիմնարար տեսական դրույթների կիրառման շնորհիվ կապակցված խոսքը դիտվում է ոչ թե լեզվական նշանի՝ օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող օբյեկտի պարզունակ փոխանակում, այլ հանրական փոխհարաբերություններում ընդգրկված խոսող անհատների մտքերի փոխանակման ճանաչողական գործընթաց: Բանական էակ լինելով՝ խոսող անհատը իր մտավոր ունակություններն է կիրառում, և ահա այստեղ է ցայտուն կերպով դրսևորվում լեզվի և մտածողության երկմիասնությունը:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ գործաբանական լեզվաբանության մեջ ընդունված դրույթը, ըստ որի՝ խոսքը կառավարելի և գիտակցաբար պլանավորվող գործունեություն է, միանգամայն անառարկելի է:

Վ. Ա. ՓԱՐՈՆՅԱՆ — *Дискурс как система кодирования знания.* —

Статья направлена на выявление когнитивной основы дискурса. Рассматривая речь как сознательно планируемое регуляторное действие, автор статьи заключает, что в прагмалингвистике дискурс трактуется не как простой обмен речи, а как когнитивный процесс обмена мыслей, участники которого социально взаимосвязаны. Являясь разумным существом, говорящий использует свои умственные способности и тем самым демонстрирует нераздельность языка и мышления.